ՆԱԽԱԳԻԾ

# ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒՍՏԱՄ ԱՂՎԱՆԻ ՄԱՀԼԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ռուստամ Աղվանի Մահլամյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցի 2015 թվականի ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով, քանի որ 2014 թվականից նշված տրանսպորտային միջոցը անսարքության պատճառով չի շահագործվել և գոյացել է գույքահարկի պարտավորություն, որը 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է ընդամենը 332328 (երեք հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմել է 261700 (երկու հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 70628 (յոթանասուն հազար վեց հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ; 2017 թվականի փետրվարի 03-ին վճարել է գույքահարկի մայր գումարը 261700 (երկու հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, 8-րդ, 9-րդ կետերով և հիմք ընդունելով Ռուստամ Աղվանի Մահլամյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Ջիվանի փողոց N 136 տուն հասցեում, անձնագիր N AH 0535863 տրված՝ 2008 թվականի փետրվարի 22-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 3608770275) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2017 թվականի փետրվարի 03-ին N1316 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել արտոնություն քաղաքացի Ռուստամ Աղվանի Մահլամյանին սեփականության իրավունքով պատկանող MERCEDES-BENZ E 350 մակնիշի, 99 SC 998 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2015 թվականի ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ՝ ազատելով գույքահարկի 70628 (յոթանասուն հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Ռ.ՍԱՆՈՅԱՆ**

**Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ**

**Լ.ՋԻԼԱՎՅԱՆ**

**Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**

Կատ. Ս.Մինասյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## << ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒՍՏԱՄ ԱՂՎԱՆԻ ՄԱՀԼԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Քաղաքացի Ռուստամ Աղվանի Մահլամյանին սեփականության իրավունքով պատկանող MERCEDES-BENZ E 350 մակնիշի, 99 SC 998 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի 2015 թվականի ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելը պայմանավորված է նրանով, որ 2014 թվականից նշված տրանսպորտային միջոցը անսարքության պատճառով չի շահագործվել և գոյացել է գույքահարկի պարտավորություն, որը 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է ընդամենը 332328 (երեք հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից մայր գումարը կազմել է 261700 (երկու հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 70628 (յոթանասուն հազար վեց հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ; 2017 թվականի փետրվարի 03-ին վճարել է գույքահարկի մայր գումարը՝ 261700 (երկու հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ: Տույժի գումարը հնարավորություն չունի վճարելու ֆինանսական դժվարին պայմաններում բնակվելու պատճառով:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## << ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒՍՏԱՄ ԱՂՎԱՆԻ ՄԱՀԼԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Քաղաքացի Ռուստամ Աղվանի Մահլամյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի 2015 թվականի ընթացքում գոյացած գույքահարկի տույժի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու մասին>> որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: